


## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

### Մարզկենտրոնը՝

ք. Գավառ

### Տարածաշրջանները՝

Գավառ,  
Սևան,  
Մարտունի,  
Վարդենիս,  
Ճամբարակ



### Քաղաքները՝

Գավառ,  
Ճամբարակ,  
Մարտունի,  
Սևան,  
Վարդենիս

Տարածքը	5 349 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը Territory share of the marz in the territory of RA	18.0 %
Համայնքներ, 2016թ. տարեկգրի դրությամբ	92
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեկգրի դրությամբ	231.8 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	69.2 հազ. մարդ
գյուղական	162.6 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	7.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	29.8 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	345 549.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	81 737.4 հա

**ՀՀ Գեղարքունիքի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով **Սևանա լիճը**:

**Մարզը հյուսիսից սահմանակից է** ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

**Մարզի** ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը ( 3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը **Սևանա լիճն է** (1 275.6 կմ<sup>2</sup>, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

**Մարզի** տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

**ՀՀ Գեղարքունիքի** մարզում է գտնվում **Սևանա լիճը**, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «**Սևան» ազգային պարկը** (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

**Մարզում** են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 2.2 %,
- գյուղատնտեսություն 19.1 %,
- շինարարություն 2.7 %,
- մանրածախ առևտուր 1.7 %,
- ծառայություններ՝ 0.8 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Մարզկենտրոնը Գավառը** (2015թ. տարեվերջին՝ 19.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էսպես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է :

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

**Սևան քաղաքը** (2015թ. տարեվերջին՝ 19.2 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է :

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ

տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

**Մարտունի քաղաքը** (2016թ. տարեկազմին՝ 12.2 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:


**Վարդենիս քաղաքի** (2016թ. տարեկազմին՝ 12.6 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

**Ճամբարակ քաղաքի** (2016թ. տարեկազմին՝ 5.7 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

**ՄՇԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	<b>Քանակը</b>				
	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>	<b>2014</b>	<b>2015</b>
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	440	476	443	498	551
այդ թվում՝					
խանութներ	226	269	239	288	333
կրպակներ	156	144	140	144	121
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	54	59	60	62	93

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	<b>Քանակը Number</b>				
	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>	<b>2014</b>	<b>2015</b>
Պետական նախադպրոցական	41	42	42	44	42
Պետական հանրակրթական	127	126	126	126	126
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	17	17	15	15
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	4	3	3	3	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	7	8	8	7
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

**ՔԱՂԱՔՆԵՐ**

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Գավառ	19 490
Սևան	19 169
Մարտունի	12 209
Վարդենիս	12 597
Ճամբարակ	5 715

**ԳՅՈՒՂԵՐ**

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
<b>Գավառի տարածաշրջան</b>		
1	Բերդկունք	296
2	Գանձակ	4 287
3	Գեղարքունիք	1 943
4	Լանջաղբյուր	2 532
5	Լճափ	1 151
6	Ծաղկաշեն	606
7	Ծովագարդ	2 202
8	Կարմիրգյուղ	6 213
9	Հայրավանք	898
10	Նորատուս	6 043
11	Սարուխան	8 241
<b>Կրասնոսելսկի տարածաշրջան</b>		
1	Աղբերք	324
2	Այգուտ	907
3	Ճապկուտ	-
4	Անտառամեջ	157
5	Արտանիշ	605
6	Արծվաշեն	-
7	Գետիկ	475
8	Դպրաբակ	595
9	Դրախտիկ	994
10	Թթուջուր	1 115
11	Կայավան	100
12	Բարեպատ	47
13	Ջորավանք	142
14	Մարտունի	576
15	Շորժա	567
16	Զիլ	652
17	Վահան	1 140
<b>Մարտունու տարածաշրջան</b>		
1	Աստղաձոր	4 601
2	Արծվանիստ	3 268
3	Գեղհովիտ	6 337
4	Նշխարք	-
5	Լեռնակերտ	282
6	Երանոս	5 314
7	Զոլաքար	6 741
8	Լիճք	5 220
9	Ծակքար	2 881
10	Ծովասար	3 024
11	Ծովինար	5 159

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
12	Ձորագյուղ	4 591
13	Մաղինա	1 136
14	Ներքին Գետաշեն	8 558
15	Վաղաշեն	4 338
16	Վարդաձոր	3 035
17	Վարդենիկ	8 811
18	Վերին Գետաշեն	4 806
<b>Մնանի տարածաշրջան</b>		
1	Գագարին	1 379
2	Գեղամավան	2 069
3	Դդմաշեն	2 829
4	Զովաբեր	1 575
5	Լճաշեն	4 816
6	Ծաղկունք	1 086
7	Ծովագյուղ	4 412
8	Նորաշեն	445
9	Չկալովկա	517
10	Սեմյոնովկա	243
11	Վարսեր	2 016
<b>Վարդենիսի տարածաշրջան</b>		
1	Ազատ	138
2	Ախարաձոր	394
3	Ակունք	4 170
4	Այրք	538
5	Ավազան	190
6	Արեգունի	364
7	Արփունք	581
8	Գեղամաբակ	128
9	Գեղամասար	1 043
10	Գեղաքար	165
11	Դարանակ	204
12	Զառիվեր	-
13	Լճավան	591
14	Լուսակունք	1 480
15	Խաչաղբյուր	1 305
16	Ծափաթաղ	346
17	Ծովակ	2 904
18	Կախակն	472
19	Կարճաղբյուր	2 520
20	Կուրթ	167
21	Կուտական	272
22	Մաքենիս	540
23	Մեծ Մասրիկ	3 451
24	Ներքին Շորժա	80
25	Նորաբակ	268
26	Նորակերտ	1 024
27	Շատջրեք	535
28	Շատվան	441
29	Զաղացաձոր	156
30	Սոթք	930
31	Վանևան	353
32	Վերին Շորժա	104
33	Տորֆավան	510
34	Տրետուք	259
35	Փամբակ	529
36	Փոքր Մասրիկ	820

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՑՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	4 966	5 034
Ծնվածներ, մարդ	136	61	75
Մահացածներ, մարդ	79	37	42
Ամուսնություններ	49	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	138	69	69
հանրակրթական	1 254	578	676
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	112	68	44
նախնական մասնագիտական (արհեստագործական)	22	4	18
միջին մասնագիտական	53	27	26
բարձրագույն մասնագիտական	72	36	36
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 080	...	...
Մարզիկներ, մարդ	75	5	70
Զբաղվածներ, մարդ	3 275	1 718	1 557
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	150	119	31
բժիշկներ	14	...	...
միջին բուժանձնակազմ	41	...	...
Գործազուրկներ, մարդ	162	55	107
Մոզիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 354	800	554
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	583	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	14 811	...	...
թատրոն	96	...	...
համերգ	-	-	-
թանգարան	137	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	30	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	16	X	X
միջին ծանրության	10	X	X
ծանր	3	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: